44. ԹԱՄՔԻ ՀԵՔԻԱԹ

Կէղնի, չէղնի թագավոր մի կէղնի։ Թագավորին մե հատ տղա կէղնի։ Էդ տղեն կէղնի տրսվիրեք տարեկան, հեչ չի ծիծղա, հրմա մալուլ նստուկ ա։

Թագավոր կիանչե զուր վոզիր, կրսե.— Էթաս հրմալ բան մե բերիս օր թը իմ տղեն իշքե, ծիծղա, թե չէ՝ քու գլոխ կզարկիմ։

Էդ վոզիրն ա, գելնա կէրթա չոլ օր բան մե բերա։ Կէրթա տեսնա օր հալվոր հայ մե, նստուկ է պալի տակ ու փետե թամք կշիքե։ Կէրթա բարև կիտա իդրան, կրսե.

— Էդ ի՞նչ է կշիքես։

Կրսե.— Թամք է կշիքեմ, կրոնին իդա թել, կհեծնան գելնան էրկնուց էրես, քյանի էդ թել կքաշին, թամք կբանձրնա, օր թորկեցին՝ գիշնա։

Կրսե.— Առ էդա չորս օսկին քըզի, էդա թամք տուր ընձի։

Էդ վոզիր հեծավ թամք, էլավ էրկինք, էկավ թագավորի քոշկի դուռ, զթամքի թել թորկեց, թագավորի քոշկի դուռ իշավ։

Թագավոր էլավ դուրս, ըսեց.— Վոզիր, բերեցի՞ր։

Ըսեց.— Հա՛, բերեցի։

Թագավոր էլավ հեծավ զթամք, բռնեց թամքի թել, թամք բանձրացավ էլավ էրկնքի էրես, թել թորկեց, իշավ էլման ուր դուռ։ Ըսեց ուր վոզիրին։

— Էդիկ ի՞նչ աղեկ բան էր բերիր։

Թագավոր խանչեց զուր տղեն, տղեն օր տեսավ զթամք, ծիծղաց։ Հեծավ տղեն զթամք, հեծավ զթամք, բանձրացավ, տղա էր էլ չգահմավ օր թամքի թելը թորկեր, օր թամքը իշներ ուրանց դուռ, քաշեց թամքի թել, գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, ուրիշ թագավորի քաղքի վրեն իջավ։ Գնաց պառվու մե դուռ կանչավ։ Գնաց ըսեց.

— Մարե՛, ընձի ներս չա՞ռնիս։

Պառավ ըսեց.— Լաո՛ բարով, խերով, ես լէ տղա չունենք, արի բըղի թալիմ իմ փողպտեն, էնիմ ընձի տղա։

Տղեն քենի մե տարի կմնա պառվու տուն, ուր խելքին կհասնի, կէղնի կատարյալ տղա դորիս։

Էն մեկ օր տղեն գելնի դուրս, կտեսնա օր հանդե ծովուն մեջ մե քոշկ ու սարա կա ջիքուկ։ Տղեն կիչքե, զքոշկ կտեսնա, գիգա տուն, կրսե.

— Մարե՛, էն ի՞նչ քոշկ է ջիքուկ հանդե ծովուն մեջ։

Կրսե.— Լաո՛, էնի թագավորի ախչկա քոշկ ու սարեն է էնդի ջիքուկ է։ Թադավորի ախչիկ, քառասուն հատ ջառե էնտեխն է։

Տղեն է, իրկուն դիգա կհանե զթամք ղուս, կհեծնա զթամք, թամքի թելն օր կքաշե, կէրթա էդ քոշկ ու սարի վրա կիշնա։ Կէրթա կպալտվի (կպահվտի) տեխ մը։ Կիշեր օր կէղնի, գողտու դռներ կբանա, կէրթա։ Կտեսնա օր թագավորի ախչիկ քնուկ է. կտեսնա օր հանդե լամփե մե դլխու վերև կվառի, մեկ լէ օտներու տակ, աբրշմե դաստմալ քաշուկ է ախչկա քիթ ու բերնին, ախչիկ քնուկ է, ուրնե խաբար չունի։ Կտեսնա օր հանդե կերակուր դլխու վերև դրուկ է։ Կնստի զկերակուր կուտե, գելնա ղլամփեք կփոխե, գլխի լամփեն կդնե օտներու տակ, օտներու լամփեն կդնե դլխու վերև, կկզի, ախչկա էրես կլզաքի, ախչիկ խաբար չէղնի, քնուկ է։

Կէրթա կպալտվի էլման ուր տեխ։

Ախչիկ սաբահտան քնուց գելնա։ Գելնա կլվացվի, գիգա զհայելին կիշկե օր հանդե ուր էրես պաքի տեխ կա, օր զուր էրես պաքեր է, խալադ ընկեր է իրես։ Էդտեխ կկանի, մտածում կէնե։ Կխանչե զքառասուն հատ ջառիեն, կրսե թե.

— Հավքն ուր թևով, օձն ուր պորտով իդա տեխ չի գար, էդի ո՞րն է օր իկե, պաքե զիմ երես, օր խալադ ինկե իմ էրես. ղու ի՞մալ պահապան իք, ընձի մուխիաթ չկենաք, օր իմ էրես պաքած է, խալադ է ինկե, օր թագավոր լսեց, իմ վիզ կզարկե։

Էդման կէղնի իրիկուն։ Կիշեր ախչիկ կքնի, հ՞իշար կմնա,

ինք կդնե սուտ քուն, կտեսնա օր հանդե խուտնիկ-խրեղեն տղե մե գիգա։ Գիգա նստի կերակուր կուտե, գելնա էլման զլամփեք կփոխա, կկզի ախչիկ էրես կբանա օր թը պաքի, ախչիկ ծեռ թալե տղի ծեռ կբռնե, կըսե.

— Ես քըզի, դուն ընձի։

Էդտեխ ինչ օր կէղնի, ինն ամիս էդտեխ կմնա ախչկա խեչ, ախչիկ կէրկուհուգովնա, իդոտկան տղին կըսե.

— Ընձի չարե մ'էրե, իմ պապ գիգա կտեսնա ընձի։

Կըսե.— Քըզի օր տանիմ, դու գիգա՞ս։

Կըսե.— Հա՛, հ՞որի՞ չեմ գա։

Կհանին զթամք դուրս, ու կհեծնան զթամք, թել օր կքաշին, թամք կբանձրնա, շատ գիգա, քիչ գիգա, էդ ախչիկ էդ թամքի վրեն կկանի ցավ, օր թը էդ էրեխեն էղնի։ Ախչիկ օր կհիվնդնա, թամքի թել կթորկե, անվերի սարի մը տակ գիշնան։

Էդտեխ ախչիկ կպառկի, կբերե զտղեն։ Տղոցկան է, տոր գիշեր կմսի։ Կըսե.

— Փըշը մե կրակ էրե, փըշը մե շուրվա էփե, ես ուտիմ։

Կըսե.— Կրակ չկա։

Էդ տղեն կտեսնա օր հանդե տեղ մե կրակ կէնին։

Գելնի տղեն կհեծնի զթամք, կէրթա կրակի խեչ գելնա, կտեսնա օր հանդե բազրգան էկե էդտեխ գիշեր է թալուկ, կրակ կէնե ուրանց համար։ Կէրթա, բարև գիտա, բարև կառնե, կըսե.

— Փըշըմ մե կրակ ավեք ընձի։

Կառնե զկրակ գիգա։ Կրակ կպատի թամքի թելին, թամքի թելը կիրիցի, կկտրի, կպատի ուրիշ տեխ, էլ չկրնա կրակ բերի հասցու էդա ախչկան։ Էդտեխ գիշեր կէղնի, զիրար կկորցուն։

Կիշեր կլուսնա, տղեն գելնա էդտեխ, սար ու ծոր գընդնա, կգաշե, էլ չգտնա։ Գելնա կհագնի շուխտմ էրկրթե սոլ, կառնե էրկթե ճոկան ծեռ, կհագնե դեվրեշ խըլըխի շոր ու գընդնա աշխարք. կսկծու էնիկ էնդիհեն կէրթա գընդնա աշխարք։

Կմնա էտա թագավորի ախչիկ ու էդ էրեխեն օդի։ Սաբախտան էդ գեղի նախորորթ կառնե զտավար, գիգա էդ սար արծա։ Կտեսնա օր հանդե էրեխի ծեն գիգա։

Գելնի էդ նախորորթ էն տեղրանք կաշե։ Կտեսնա օր հանդե պալի տակ խորոտիկ քուլֆաթ մե ու էդ էրեխեն ինոր գիրկ նըստուկ ին էդա պալի տակ։ Օր կտեսնա էդա նախորորթ, կնիկ կվախենա, գիլա։

Կրսե.— Մի՛ լա, մի՛ լա, մ'վախենա, քրզի ես բան մե չեմ էնե։

Օդի կմնա նախրորթ հար իրիկուն կնկան խեչ։ Իրիկուն կառնե դկնիկ ու զէրեխեն, գիգա ուր տուն, կէնա ուրին զավակ։

Տղեն է, մե քենի տարի օր կմնա կփորկի, կբետնա, գելնա կղվռնա բաղի մեջ։ Էդ քաղաք լէ էն տղի պապու քաղաքն է, օր հեչ չէր ծիծղե։

Տղեն օր էլմա կմեծնա, թագավոր կէրթա մեջ քաղքին կզվռնե, աչք օր կքիսնա տղեն, թագավորի ուշք գընցնա։

Կրսե.— Էդա տղեն վի՞ն տղեն է, ինչ օր իմ սիրտ ճղին, էդ տղեն դնին իմ սրտին մեջ։

Կրսին.— Նախրջու տղեն է։

Կրսե.— Ուր կշռանով օսկի գիտամ, թրխ էգ տղեն իտան ձի։

Կբերե կդնե կշեռք ու կիշռե օսկին, գիտա նախրջուն, զտղեն կառնե ուրին, կտանե կէնե ուրին տղա։

Տղեն կբետնա, կէղնի քսան տարեկան։

Թագավոր էլման գելնա գընկնա քաղքի մեջ ախչիկ տեսնա, վիր ախչիկ տեսնա հավնի, բերա ուր տղին։ Կէրթա էդման նախրջու փանջարի տկով գընցնա, աչք քիսնա էդման էդ տղի մամ, էլման թագավորի ուշք գընցնա, էմալ օր խորոտ ա։

Կրսե.— Էդի վի՞ն ախչիկն է, էտա խորոտ ախչիկ ես պտի ուզիմ իմ տղին։

Մամ կուզե տղին։ Տղեն կբետնա չը գիտնա, թե էդ ուր մամն է։ Կուզե, կտանե տուն։ Կէրթա նախրջուն կրսե.

— Քրզի էսա խաղար օսկի գիտամ, քու ախչիկ տու իմ տղին։

Կրսե.— Աղե՛կ, գիտամ։

Գիտա զօսկին, կառնե զախչիկ, դհոլ զուռնեն կզարկե, կբիրե ուրին տուն։ Քառասուն օր դհոլ զուռնա կզարկե, կփսակե զախչիկ ուրին տղու հետ։

Թագավորի տղեն օր ուր ճիժն ու կնիկ կկորցու, օր կէղնի դեվրիշ կըլըղի, գընգնա աշխարք, էն օր գիգա ուր պապու քաղքի մեջ։ Գիգա կկանի ուր պապու դուռ, դյաֆ լէ թալուկ ուր թև։ Կհարցու.— Էդ ի՞նչ հարսնիք է։

Կրսե.— Թագավոր ուր տղի հարսնիք է կէնե։

Կրսե.— Ընձի չթորկի՞ք գամ օդի փըշրմ դյաֆ զարկիմ։

Թագավոր օր գելնա, աչք կքիսնա էդ գևրիշ, չէ՞ ուր տղեն է,

ուր սիրտ կժղճա, սիրտ կդառնա վրեն, ու չգինա օր ուր տղեն է, կըսե.

— Բարով, հազար բարով, էրթանք ներս դյաֆ զարկ։

Կէրթան ներս, կբերե ըդրան խահֆա կխմցու ու կնստին ներս, դյաֆ կզարկին, ժխլին։

Թագավոր կըսե.— Դևրիշ բաբա, հեքիաթ մը ընձի չգինա՞ս, ըսիս։

Կըսե.— Կգինամ, հ՚որի՞ չըմ դինա, հեքիաթ մը քըզիկ կըսիմ։

Էլման դևրիշ կնստի զուր դլխու գալած զմեն թագավորուն կըսե, իմալ օր ես քըզի ըսեցի, էն լէ թագավորին հեքիաթ դլխե գլոխ կըսե։

Թագավոր կթռնա կկանի, կբռնե դևրիշի ճակատ կպաքե, գլոխ կըսե։

— Դու իմ տղեն իս, ես լէ քու պապն իմ։

Հարս լէ փարղի ետևեն գիգա, կբռնե զթագավորի ձեռք կպաքե, կըսե.

— Ես լէ էդ դևրիշի կնիկն իմ, մենք էկանք ճամփախ, զիրար կորցուցինք։ Էդա իմ իրիկն է, էդա լէ իմ տղեն է, դու զիս բերիր իմ տղին։

Գելնան թաժա էլման դհոլ զուռնեն կզարկին, թաժա թագավոր կբերի զուր տղեն ու զուր հարս կփսակե։

Ընդոնք հասնին ուրանց մուրազին, մենք լէ հասնինք մեր մուրազին։

Էրկնքուց պատավ իրեք խնձոր՝ մեկ գրողին, մեկ ըսողին, մեկ լէ հավսարական։